## ԻԲՆ ՀԱՈՒԿԱԼ (մահ. 977-ից հետո)

Աբու լ-Կասիմ Մուհամմադ Իբն Հաուկալը համարվում է աշխարհագրության մեջ ալ-Իսթախրիի գործի շարունակողը, նա ներկայացնում է իր դարաշրջանի այն գործչի կերպարը, որն իր մեջ միախառնում է արկածախնդիր վաճառականին ու գիտնականին:

Իբն Հաուկալը ծնվել է Մծբինում (Նիսիբին), Վերին Միջագետքում (Ջազիրա): Հավանաբար նրա մանկությունն անցել է իր ծննդավայրում:

Նա, որպես վաճառական, սկսում է ճանապարհորդել սկսած 943-ից, դուրս գալով Բաղդադից ու այցելելով բազմաթիվ երկրներ Հնդկաստանից մինչև Ատլանտյան օվկիանոս: Մասնավորապես այցելում է Հյուսիսային Աֆրիկա, Իսպանիա (Անդալուս) և Սահարայի հարավային գոտին (947-951), ապա Եգիպտոս, Հայաստան և Ատրպատական (955), Ջազիրա, Իրաք, Խուզիստան և Ֆարս (961-969), Խորեզմ և Տրանսոքսիանա (969) և վերջապես Սիկիլիա (973), որից հետո արդեն նրա անցած ուղին հայտնի չէ:

Ըստ իր աշխատանքի, նա շատ լավ ծանոթ է հատկապես Իսպանիային (Անդալուս) ու Արևմուտքի երկրներին: 951-ին երկարատև ճանապարհորդությունից վերադառնալով Բաղդադ, Իբն Հաուկալը հանդիպում է իր ավագ ժամանակակից ալ-Իսթախրիին, որը նրան խնդրում է խմբագրել ու ամբողջացնել իր աշխատանքը: Իբն Հաուկալը համաձայնվում է, բայց ի վերջո, որոշում է գրել իր ինքնուրույն աշխատանքը հենվելով իր նախորդի երկի վրա, ավելացնելով իր անձնական տեղեկություններն ու անվանելով այն արդեն ավանդական դարձած՝ «Քիտաբ ալ-Մասալիք ուա լ-Մամալիք» կամ «Սուրատ ալ-Արդ» (Երկրի պատկերը): Այս երկը հավանաբար գրվել է 967-ին և նվիրված է նշանավոր Համդանի ամիր Սայֆ ալ-Դաուլային, իսկ երկրորդ խմբագրությամբ շուրջ 977-ին: Եվ վերջապես աշխատանքի վերջնական տարբերակը ստեղծվել է հավանաբար 988 թվականին:

Դե Դույեն Իբն Հաուկալի բնագիրը հրատարակել էր ըստ Լեյդենի և Օքսֆորդի ձեռագրերի: Առաջին աշխարհամարտից հետո հոլանդացի արաբագետ Յ. Կրամերսը Կոստանդնուպոլսում հայտնաբերեց մի նոր խմբագրություն, որը տարբերվում է նախորդներից: Իր նոր հրատարակության մեջ Կրամերսը Դե Դույեի հրատարակածի վրա ավելացրել է նորահայտ ձեռագրի և Փարիզի ձեռագրի (պարունա-

*կում է հավելումներ 1139-1184 թթ.։ Հավելումները քառակուսի փակագծերի մեջ։*

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Opus Geographicum auctore Ibn Haukal, ed. J. H. Kramers, Bibliotheca Geographorum Arabicorum, v. II, Leiden, 1967.

*(R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Age, Paris, 1957, p. 135-136,* Крачковский, IV, стр. 199. *Ibn Hawkal, A. Miquel, EOI, CD-ROM, (III: 786b)).*

*Տե՛ս նաև*

- *Opus Geographicum auctore Ibn Haukal, J. H. Kramers, Lugduni Batavorum, 1938.*
- Bibliotheca Geographorum Arabicorum, M. J. de Goeje, v. II, Leiden, *1878.*